## ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

*1986 թ. դեկտեմբերի 30-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը, որտեղ, ըստ գիտությունների ակադեմիայի կանոնադրության, ընտրվեցին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի իսկական անդամներ և թղթակից անդամներ։*

*Ակադեմիայի իսկական անդամներ ընտրվեցին* Ռաֆայել Արամի Ալեքսանդրյանը, Ռուբեն Վիկտորի Համբարձումյանը *(մաթեմատիկա)*, Գրիգոր Արամի Գուրզադյանը *(աստղաֆիզիկա)*, Ռոբերտ Վարդգեսի Աթոյանը *(հաշվողական տեխնիկա և կառավարման համակարգեր)*, Արմեն Անուշավանի Գալոյանը *(բիոքիմիա)*, Հովհաննես Գեղամի Բակլավաջյանը *(ֆիզիոլոգիա, ֆիզիոլոգիապես ակտիվ նյութեր)*, Աշոտ Տիգրանի Ասլանյանը *(երկրաբանություն)*, Գագիկ Խորենի Սարգսյանը *(արևելագիտություն)*, Միքայել Խաչիկի Քոթանյանը *(տնտեսագիտություն, այդ թվում՝ արտադրության էկոնոմիկա և կազմակերպում)*, Ռուբեն Վարոսի Զարյանը *(արվեստագիտություն)*։

*ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամներ ընտրվեցին* Անրի Բարսեղի Ներսիսյանը *(մաթեմատիկա)*, Լյուդվիգ Վաչիկի Միրզոյանը *(աստղաֆիզիկա)*, Ռոբերտ Հովսեփի Ավագյանը, Ռուդոլֆ Մուրադի Մուրադյանը *(ֆիզիկա)*, Ալպիկ Ռաֆայելի Մկրտչյանը *(ակուստաֆիզիկա)*, Ռաֆայել Ավետիսի Ղազարյանը, Ռադիկ Մարտիրոսի Մարտիրոսյանը *(ռադիոֆիզիկա և քվանտային էլեկտրոնիկա)*, Վլադիմիր Սարգսի Սարգսյանը *(մեխանիկա)*, Յուրի Լևոնի Սարգսյանը *(մեքենագիտություն)*, Արման Ռոզվորի Բուչուկյանը, Հարություն Արտաշեսի Թերզյանը *(հաշվողական տեխնիկա և կառավարման համակարգեր)*, Վռամ Վաղինակի Դովլաթյանը, Մայա Հրանտի Ինճիկյանը *(օրգանական քիմիա)*, Իրմա Արմենակի Վարդանյանը *(ֆիզիկական քիմիա)*, Միսակ Արշամի Դավթյանը, Կոնստանտին Գրիգորի Ղարագյոզյանը *(բիոքիմիա)*, Յուրի Թադևոսի Ալեքսանյանը *(մոլեկուլյար կենսաբանություն)*, Ալեքսանդր Լևոնի Միքայելյանը *(սրտային վիրաբուժություն)*, Լիա Լևոնի Օսիպյանը *(բուսաբանություն և բույսերի ֆիզիոլոգիա)*, Սերգեյ Վաղարշակի Գրիգորյանը *(երկրաքիմիա)*, Ռաֆայել Հակոբի Մովսիսյանը *(գեոդեզիա)*, Հրանտ Ալեքսանի Ավետիսյանը, Վլադիմիր Բախշիի Բարխուդարյանը *(պատմություն)*, Հրաչիկ Ռուբենի Սիմոնյանը *(ՍՄԿԿ պատմություն)*, Հրանտ Սմբատի Թամրազյանը *(գրականագիտություն)*, Վահագն Արմենակի Դավթյանը *(գրականություն)*, Էդուարդ Ռաֆայելի Աթայանը *(լեզվաբանություն)*։

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱՅՈՒՄ

*1986 թ. նոյեմբերի 26-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի խմբագրական կոլեգիայի նիստը, որը քննարկեց «ՍՄԿԿ Կենտկոմի որոշումը «Կոմունիստ» ամսագրի մասին» և «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի խմբագրության խնդիրները»։ Հաղորդումով հանդես եկավ ամսագրի գլխավոր խմբագիր, պատմական գիտությունների դոկտոր Վ. Ա. Միքայելյանը։ Նա խոսեց այն խնդիրների մասին, որոնք ծառացել են խմբագրության առաջ «Կոմունիստ» ամսագրի մասին ՍՄԿԿ Կենտկոմի որոշման լույսի ներքո։*

*Քննարկմանը մասնակցեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Ա. Ա. Առաքելյանը, Գ. Բ. Ջահուկյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Ռ. Վ. Զարյանը, բանասիրական գիտությունների դոկտոր Գ. Հ. Հակոբյանը, բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Հ. Ջաքարյանը։ Նշվեց, որ «Կոմունիստ» ամսագրի մասին» ՍՄԿԿ Կենտկոմի որոշման մեջ բարձրացված հարցերի մի զգալի մասը վերաբերում է «Լրաբեր» ամսագրի խմբագրությանը։ Խմբագրությունը որոշակի աշխատանք է կատարում ՍՄԿԿ XXVII համագումարի առաջադրած որոշումների կենսագործման ուղղությամբ։ Ամսագրի հետհամագումարյան բոլոր համարներում պատշաճ տեղ է տրվել բազմաթիվ հոդվածների, որոնցում, համագումարի որոշումների լույսի ներքո, լուսաբանվում են տնտեսագիտական, փիլիսոփայական և պատմագիտական պրոբլեմները։ Մարտ ամսից սկսած ամսագիրը հրատարակել և հրատարակում է հոդվածներ՝ նվիրված նշված պրոբլեմներին, որոնց հիմնական մասը զետեղ-*